Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիա

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2013 թվականի **թիվ 8/11**

քաղ. Մոսկվա

Մաքսային գործի բնագավառում կատարվող հանցագործությունների հայտնաբերմանը, բացահայտմանը եւ կանխարգելմանը, Մաքսային միության մաքսային սահմանով մաքսանենգ ճանապարհով ապրանքների տեղափոխման ուղիների բացահայտմանը եւ վերացմանն ուղղված օպերատիվ տեղեկատվության փոխանակման մասին

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան

ՈՐՈՇԵՑ՝

1. Անհրաժեշտ համարել, որ առաջադրված խնդիրների արդյունավետ լուծման համար պահանջվում է մշակել Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միջեւ օպերատիվ նշանակության տեղեկատվության փոխանակման հատուկ կարգը կանոնակարգող նորմատիվ փաստաթուղթ, որով հնարավոր կլինի ժամանակին հայտնաբերել եւ կանխարգելել մաքսային գործի բնագավառում նախապատրաստվող, կատարվող եւ (կամ) կատարված հանցագործությունները:

2. Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ–ին (ՄԴՊՎ, Մուսլիմով Ն. Ե.)՝ մինչեւ 2013 թվականի օգոստոսի 1-ը մշակել ու Բելառուսի Հանրապետության ՊՄԿ եւ Ռուսաստանի ՄԴԾ համաձայնեցման ուղարկել Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միջեւ օպերատիվ

նշանակության տեղեկատվության փոխանակման հարցերը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթի նախագիծ, որով հնարավոր կլինի ժամանակին հայտնաբերել եւ կանխարգելել մաքսային գործի բնագավառում նախապատրաստվող, կատարվող եւ (կամ) կատարված հանցագործությունները:

3. Բելառուսի Հանրապետության ՊՄԿ–ին (ՄեւՎՄԻԴՊԿՎ, Պ. Ա. Լոբաչյով) եւ Ռուսաստանի ՄԴԾ–ին (ՄԴՊԳՎ, Վ. Ս. Միրոնով)՝ ուսումնասիրել ներկայացված նորմատիվ փաստաթղթի նախագիծը եւ մինչեւ 2013 թվականի սեպտեմբերի 1-ը դրա վերաբերյալ դիտողություններ ու առաջարկներ ուղարկել Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ:

4. Ղազախստանի Հանրապետության ՖՆ ՄՀԿ–ին (ՄԴՊՎ, Մուսլիմով Ն. Ե.) եւ Բելառուսի Հանրապետության ՊՄԿ–ին (ՄեւՎՄԻԴՊԿՎ, Պ. Ա. Լոբաչյով)՝ մինչեւ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միջեւ օպերատիվ նշանակության տեղեկատվության փոխանակումը կանոնակարգող համապատասխան նորմատիվ փաստաթղթի մշակումը եւ հաստատումը՝ մինչեւ 2013 թվականի հուլիսի 1-ը որոշել կապի հատուկ ուղին (ֆաքսային) եւ պատասխանատու պաշտոնատար անձանց (կապի սպաներ):

Նախագահ՝ Ա. Յու. Բելյանինով

Նախագահի տեղակալ՝ Մ. Տ. Յեսենբաեւ

Բելառուսի Հանրապետության ՊՄԿ-ի նախագահի տեղակալ, Միավորված կոլեգիայի անդամ՝ Ս.Վ. Բորիսյուկ